

մի եւ նոյն ժամանակ նա ասպատակ սփռեց մօտակայ գիւղերը: Որովհետեւ հունձքերը հասած էին, ուստի բնակիչք խաղաղութիւն կապեցին նորահետ փայտակարանին շնորհած պայմանների հիման վերայ եւ բաց արին դռները: Սալման մտաւ քաղաք եւ մնաց այնտեղ, առաջ ուղարկելով իւր հեծելազօրը, նւաճեց Շիկաշէն, Մեծկուանք (?)¹, Ուլզ² (?) Մասրբան³, Հարճլանք⁴, Տաբար⁵ (?), եւ Աղուանից այլ գաւառները: Սալման առաջարկեց Բալասականի Քրդերին ընդունել իսլամ. սոքա պատերազմեցին հետր, բայց յաղթւելով, նոցանից ոմանք համաձայնեցան գլխահարկ տալ, իսկ ոմանք, որոնց թիւը քիչ էր, «սագ-սագ» վճարեւ:

Ինձ պատմել են Պարտուի բնակիչներից շատերը, թէ Համբօր⁵ անունով հին քաղաք կար, որ

¹ Բնագրի المسقوان թերեւս ուղղելու է المسقوان (Մեծկուան): Շիկաշէն = Σακασσηνή (Strabo 73, 509, 511), Σακαπηνή (Ptol.), Sacasani (Plin. VI, 10):

² Դժար է տեսլ, զոր գաւառներին կը վերաբերին այս երեք աղաւաղած անունները. թերեւս ձեռագրերի համեմատութիւնն վերականգնել կարողանար ճիշդ ընթերցումն:

³ Թւի թէ փոխանակ اَوْذ կարգալու է اَوْتى = Ուտի (Աւանձնակ): Ի նկատի առնելով այն հանգամանքն որ արաբացիներին՝ շնորհիւ սեմական լեզուի հնչունների համեմատական աղբատութեանն՝ հեշտ չէր ընտելանալ հայ գաւառների դժարարտասանելի անունը, ենթագրելու է հարկաւ, որ շատ դէպքերում նոյն իսկ ինքն պատմողը կարող էր սխալ աւանդել այս այն բարդ անունն. այս հիման վերայ փոխանակ المصربان սպասելու էր المرصبان (Ոստանի Մարծպան Աղուանս):

⁴ الهرجلان ուղղագրելու է الرحيلان

⁵ Զբաւոյրների համար ողորմութիւն, որ ունեւոր մուսլիմները պարտաւոր էին՝ իրրեւ օրինաւոր տուրք՝ պետական գանձարանը (Քերինսյ) ուղարկել:

⁶ شَمَكُور